ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Կոտայքի մարզի Կաթնաղբյուր գյուղական համայնքի
հաշվետու համայնքային ժողովի

գ. Կաթնաղբյուր

28.08.2015թ.

2015 թվականի օգոստոսի 28-ին Կաթնաղբյուրի գյուղապետարանում տեղի ունեցավ Կաթնաղբյուր համայնքի հաշվետու ժողովը:

Մասնակցությամբ՝
Համայնքի ավագանու անդամներ

1.Արամայիս Համբարձումյան
2.Հայկ կարապետյան
3.Ծվեր Մկրտչյան

Գյուղապետարանի աշխատակազմից՝

1.Համայնքի ղեկավարի տեղակալ Ա.Գաբրիելյան
2.Աշխատակազմի քարտուղար Ա.Խաչատրյան
3.Առաջատար Մասնագետ Վ.Ղազարյան
4.Առաջատար մասնագետ Գ.Հարությունյան

Մասակցում էին համայնքի 22 բնակիչներ:

ՕՐԱԿԱՐԳ

1.2015 թվականի ընթացքում համայնքի ավագանու և համայնքի ղեկավարի կողմից ստարված աշխատանքների հանրային իրազեկման մասին:
2.Ընթացիկ կամ այլ հարցեր:

Լսեցին—Կաթնաղբյուր համայնքի ղեկավար Ք.Ասատրյանին

Հաշվետու ժամանակահատվածում ղեկավարվելով ՀՀ Սահմանադրությամբ, <<Տեղական ինքնակառավարման մասին>>, <<Համայնքային ծառայության մասին>> օրենքներով և այլ իրավական ակտերով Կաթնաղբյուրի գյուղապետարանի աշխատակազմը որոշ աշխատանքներ է կատարել համայնքի սոցիալ տնտեսական զարգացման ուղղությամբ:
Համայնքային ծառայության աշխատանքները կատարում են պատշաճ մակարդակով, բավարար է կազմակերպվում համայնքային քաղաքացիների ընդունելությունը համայնքի ղեկավարի և ավագանու կողմից:

Իմ ամենօրյա հսկողության տակ է համայնքի ֆինանսական գործունեությունը:
Համայնքի ղեկավարի նախաձեռնությամբ ոռոգման ջրագծերի մասնակի կապ վերանորոգում է կատարվել: Համայնքի 3-րդ 4-րդ, 5-րդ փողոցների և սնահողեր տանող ճանապրհը կատարվել է մասնակի խճապատում: Համայնքի 1-ին փողոցում կատարվել է գծանշում: Գյուղապետարանի տանիքի վերանորոգում: Համայնքի անասունների համար ջրավազանի կառուցում:

Ըստ հողային հաշվեկշռի համայնքում առկա է 216.92 հա գյուղ նշանակության հողատարածք, որից վարելահող 109.39, արոտ 42.31 հա, այլ հողեր 45.91 հա:
Վարձակալության հատկացվել է 19հա:
Համայնքի աշխատակազմի կողից ապահովվել է համայնքի բյուջեի, համայնքի ավագանու, համայնքի ղեկավարի և աշխատակազմի քարտուղարի կողմից ընդունված իրավական ակտերի հրապարակայությունը:
Բավարար է կազմակերպվում համայնքի քաղաքաշինության աշխատանքները:
Ելույթ ունեցան համայնքի բնակիչներ.
Համայնքի բնակիչներ Կարապետ Ասատրյանը, Ջանիկ Մկրտչյանը, Սարգիս Հարությունյանը,Արթուր Խաչատրյանը, Մուշեղ Գեղամյանը, Մխիթար Մխիթարյանը, Գուրգեն Խաչատրյանը, Սարգիս Գևորգյանը, Էդուարդ Մարտիրոսյանը, Սմբատ Սերոբյանը, Գարեգին Մկրտչյանը, որոնք համայնքի ղեկավարի կատարած աշխատանքները գնահատեցին դրական:

ԼՍԵՑԻՆ
Համայնքի ղեկավար՝ Ք. Ասատրյանի հաղորդումները համայնքի աշխատակազմի ընթացիկ աշխատանքների մասին: Նա նշեց, որ բավարար հիմքերի վրա է գտնվում համայնքի աշխատանքային ներքին կարգապահությունը:

Աշխատակազմի ամենօրյա աշխատանքն է համարվում հարկերի հավաքագրումը, քաղաքացիների ընդունելությունների և համայնքի գործավարության կազմակերպումը: Ամենօրյա ուշադրության կենտրոնում է համայնքի սանիտարական մաքրության ապահովման աշխատանքները:

ՈՐՈՇԵՑԻՆ
Համայնքի ղեկավարի հաշվետվությունը ընդունել ի գիտություն

Կաթնաղբյուր համայնքի ղեկավար՝ *Ք. Ասատրյան*